«ԱԶԱՏ ՔՎԵ»

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 Թ. ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարճաժամկետ դիտորդական առաքելության զեկույց
Տավուշի, Լոռու և Շիրակի մարզեր

Co-funded by the European Union

erim Equal Rights & Independent Media

PROELECT PROMOTING ACCOUNTABILITY IN ELECTORAL PROCESSES

YOUTH FOR CHANGE

We Youth NGO of Lori Region

*Այս զեկույցը մշակվել է «**Երիտասարդների առաջնորդությամբ՝ թափանցիկ ընտրությունների խթանում Հայաստանում (2026թ.)» (Youth-Led Oversight for Transparent 2026 Elections in Armenia)** ծրագրի շրջանակներում:*

Այս զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության (European Union) և Equal Rights & Independent Media (ERIM)-ի ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատու են բացառապես «Երիտասարդները հանուն փոփոխության» ՔՀՋ ՀԿ-ն և «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ն և այն չի կարող արտահայտել Եվրոպական միության տեսակետները:

1. Առաքելության մասին

1.1. «Ազատ Քվե» դիտորդական առաքելությունը

«Ազատ Քվե» դիտորդական առաքելությունը ստեղծվել է 2026թ. մարտի 7-ին: Այն անկախ և անկողմնակալ քաղաքացիական նախաձեռնություն է, որի նպատակն է նպաստել Հայաստանում ազատ, արդար, թափանցիկ և ժողովրդավարական ընտրությունների անցկացմանը, ընտրական գործընթացների օրինավորության ամրապնդմանը և հանրային վերահսկողության զարգացմանը:

Առաքելությունն իրականացնում է ընտրական գործընթացների անկախ դիտարկում՝ ներգրավելով և վերապատրաստելով դիտորդների, համակարգելով նրանց աշխատանքը ընտրական տեղամասերում, փաստագրելով ընտրական գործընթացի ընթացքը և արձանագրված խնդիրները, ինչպես նաև վերլուծելով դիտարկման արդյունքները:

«Ազատ Քվե»-ի գործունեության առանցքում են ընտրական իրավունքների պաշտպանությունը, ընտրական գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության խթանումը, անկախ քաղաքացիական վերահսկողության զարգացումը և ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահության ամրապնդումը:

Առաքելությունը գործում է անկախության, անկողմնակալության և քաղաքական չեզոքության սկզբունքներով՝ չաջակցելով և քարոզչություն չիրականացնելով որևէ քաղաքական ուժի կամ թեկնածուի օգտին կամ դեմ:

ՀՀ Ազգային ժողովի 2026 թ. հունիսի 7-ի ընտրությունների շրջանակում առաքելությունն իրականացվել է երկու հասարակական կազմակերպությունների կողմից՝ «Երիտասարդները հանուն փոփոխության» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի և «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ի:

1.2. Առաքելության կազմում ընդգրկված կազմակերպություններ

1.2.1. «Երիտասարդները հանուն փոփոխության» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ

Կազմակերպությունը հիմնադրվել է 2017թ.-ի դեկտեմբերի 15-ին երիտասարդների կողմից: Նրա առաքելությունն է խթանել ժողովրդավարական արժեքները, երիտասարդների քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և ներառական հասարակության զարգացումը:

Կազմակերպության գործունեության առանցքային ուղղություններից են ժողովրդավարական գործընթացների և ընտրությունների վերաբերյալ երիտասարդների իրազեկվածության բարձրացումը, ընտրական գործընթացներում նրանց գիտակցված մասնակցության խթանումը, առաջին անգամ ընտրողների կարողությունների զարգացումը, ինչպես նաև ընտրությունների դիտարկման և քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ամրապնդումը:

Կազմակերպությունն իրականացնում է կրթական, իրազեկման և կարողությունների զարգացման ծրագրեր՝ համագործակցելով երիտասարդների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, պետական կառույցների և միջազգային գործընկերների հետ:

Գործունեության հիմնական ուղղությունները՝

- ժողովրդավարության և քաղաքացիական մասնակցության խթանում,
- երիտասարդների ընտրական իրազեկվածության և գիտակցված մասնակցության բարձրացում,
- ընտրությունների դիտարկման և քաղաքացիական վերահսկողության կարողությունների զարգացում,
- մեդիագրագիտության, ապատեղեկատվության նկատմամբ դիմակայունության և քննադատական մտածողության զարգացում,
- երիտասարդների առաջնորդության և որոշումների կայացման գործընթացներում ներգրավվածության խթանում:

1.2.2. «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ

Կազմակերպությունը հիմնադրվել է 2016 թվականին Լոռու մարզի ակտիվ երիտասարդների կողմից: Գործունեության առանցքում երիտասարդների և կանանց ներուժի զորեղացումն է՝ նրանց դարձնելով ակտիվ, պատասխանատու և նախաձեռնող քաղաքացիներ իրենց համայնքներում:

Կազմակերպության տեսլականն է համերաշխ, ներառական և պատասխանատու հասարակությունը, որտեղ երիտասարդներն ու կանայք դրական փոփոխությունների շարժիչ ուժ են, իսկ առաքելությունը՝ նպաստել համայնքների կայուն զարգացմանը երիտասարդների և կանանց բովանդակային ներգրավմամբ:

«ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ը մշակում և իրականացնում է կրթական և մասնակցային ծրագրեր՝ ուղղված երիտասարդական առաջնորդության զարգացմանը, քաղաքացիական մասնակցության խթանմանը, մեդիագրագիտության տարածմանը, տեղական ժողովրդավարության ամրապնդմանը, ֆինանսական գրագիտության և համայնքային ներգրավվածության բարձրացմանը: Ծրագրերն իրականացվում են աշխատարանների, ճամբարների, վերապատրաստումների, մենթորական ծրագրերի և համայնքային նախաձեռնությունների ձևաչափերով՝ հատկապես գյուղական և սահմանամերձ համայնքներում:

Կազմակերպությունը ստեղծում է ներառական հարթակներ, որտեղ երիտասարդները կարող են բարձրաձայնել իրենց համայնքներում առկա խնդիրները, մշակել լուծումներ և իրականացնել փոփոխություններ: Տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային գործընկերների հետ համագործակցության միջոցով այն նպաստում է տեղական ժողովրդավարության զարգացմանը և երկարաժամկետ դրական ազդեցության ստեղծմանը:

1.3. Ֆինանսավորումը

«Երիտասարդների առաջնորդությամբ՝ թափանցիկ ընտրությունների խթանում Հայաստանում (2026թ.)» ծրագիրը ֆիանասավորում է Եվրոպական միության (European Union) և Equal Rights & Independent Media (ERIM) կազմակերպության կողմից:

1.4. Հավատարմագրման գործընթացը և ԿԸՀ-ի մերժման դատական բողոքարկումը

- **ԿԸՀ-ի մերժման որոշման համարը՝** թիվ 40-Ա որոշումը,
- **ԿԸՀ-ի մերժման որոշման ամսաթիվը՝** 14 ապրիլ, 2026,
- **դատարանի անվանումը՝** ՀՀ վարչական դատարան,
- **հայցի ներկայացման ամսաթիվ՝** 17 ապրիլ, 2026,
- **վճռի ամսաթիվ՝** գործի քննությունն ավարտվել է 21.04.2026 թվականին և վճռի հրապարակումը նշանակվել 27.04.2026 թվականին ,
- **գործի համարը՝** ՎԴ/6250/05/26 :

Ընտրության օրվա դիտարկմանը նախորդող փուլում առաքելության կազմում ընդգրկված կազմակերպությունները դիմել են Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ)՝ ընտրությունների դիտարկման հավատարմագրում ստանալու համար:

ԿԸՀ-ն հավատարմագրել է միայն «Երիտասարդները հանուն փոփոխության» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ին: «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ի դիմումը մերժվել է՝ պատճառաբանելով, որ կազմակերպության կանոնադրական նպատակները չեն համապատասխանում ԿԸՀ-ի կողմից սահմանված չափորոշիչներին:

Կազմակերպությունը մերժումը բողոքարկել է դատական կարգով և գործը շահել: Դատարանի որոշման հիման վրա ԿԸՀ-ն պարտավորվել է գրանցել և հավատարմագրել նաև «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ին, ինչի արդյունքում ընտրության օրվա դիտարկումն իրականացվել է առաքելության երկու կազմակերպությունների կողմից՝ լիարժեք հավատարմագրված կարգավիճակով:

Առաքելության գնահատմամբ՝ սույն դեպքը վկայում է հավատարմագրման չափորոշիչների ոչ հստակ և սահմանափակող կիրառման մասին, ինչը դիտորդական կազմակերպությունների համար ստեղծում է լրացուցիչ վարչական և ժամանակային բեռ՝ ուղղակիորեն ազդելով դիտարկման նախապատրաստական աշխատանքների վրա: Հատկանշական է, որ մերժման հիմքում դրված է եղել կանոնադրական նպատակների գնահատումը, մինչդեռ դատարանը հաստատել է կազմակերպության՝ դիտարկում իրականացնելու իրավունքը:

1.5. Դիտարկման մեթոդաբանությունը և ընդգրկումը

- **Դիտարկման տեսակը՝** կարճաժամկետ դիտարկում՝ իրականացված բացառապես քվեարկության օրը (07:30-ից մինչև ձայների հաշվարկի ամփոփումը):
- **Աշխարհագրական ընդգրկումը՝** երեք մարզ.

1. **Տավուշ** (Իջևան, Բերդ համայնքներ) - 8 դիտորդ,
2. **Լոռի** (Վանաձոր, Ալավերդի, Գյուլագարակ համայնքներ) - 14 դիտորդ,
3. **Շիրակ** (Գյումրի, Ախուրյան, Արթիկ, Անի, Ամասիա համայնքներ) - 28 դիտորդ:

- **Գործիքակազմը՝** ստանդարտացված հարցաշարեր, տեղամասային արձանագրություններ և գրանցամատյանում կատարվող գրառումներ, համակարգող կենտրոնի շուրջօրյա աշխատանք, իրավաբանական օպերատիվ աջակցություն, ԿԸՀ-ին և ՆԳՆ Ոստիկանությանն ուղղված ահազանգեր ու դիմումներ:

2. Ընտրության օրվա դիտարկման արդյունքները

Ստորև ներկայացված են երեք մարզերում արձանագրված խախտումները՝ խմբավորված ընտրության օրվա երեք փուլերով և ըստ խախտման բնույթի: Տեղամասերի համարները թույլ են տալիս նույնականացնել ընտրատարածքային ընտրական աշխարհագրությունը (37/–, 38/–՝ Տավուշ; 22/–, 23/–, 24/–՝ Լոռի; 30/–, 31/–, 32/–, 33/–, 35/–՝ Շիրակ):

2.1. Նախապատրաստական փուլ (07:00 – 08:00)

Դիտորդների մուտքը և հանձնաժողովների նիստերի մեկնարկը

Դիտորդների ճնշող մեծամասնությունն անարգել մուտք է գործել տեղամասեր ժամը 07:00-ին:
Դիտարկված բոլոր հանձնաժողովները նախապատրաստական նիստը սկսել են օրենքով պահանջվող հինգ և ավելի անդամի մասնակցությամբ:
38/26 տեղամասը բացվել է սահմանված ժամից շուտ, մինչդեռ մնացած տեղամասերը բացվել են ժամանակին՝ 08:00-ին:

Քվեարկության սենյակի կահավորումը և քվեարկության գաղտնիությունը

38/40 քվեարկության խցիկներից մեկը տեղադրված է եղել անմիջապես բաց պատուհանի մոտ:
37/37 (երկրորդ հարկ) պատուհանների կողմից ոչ պատշաճ կահավորումը վտանգել է քվեարկության գաղտնիությունը. դիտորդի բարձրաձայնումից հետո հանձնաժողովը շտկել է խնդիրը:
24/23 խցիկը տեղադրված է եղել պատուհանի մոտ. հանձնաժողովի կողմից պատուհանը թղթերով փակելու փորձը բավարար չի եղել:
31/38 քվեատուփերից մեկը դրված է եղել արհեստական պատնեշի մոտ, որը ամբողջությամբ չի փակել տարածքի տեսանելիությունը:
31/50 նախապատրաստական փուլում արձանագրված կահավորման խնդիրը հետագայում շտկվել է:
38/53 արձանագրվել է քվեատուփին ներկայացվող պահանջների խախտում:

Քվեարկության խցիկների վնասվածությունը

33/27 և 31/38 տեղամասերում խցիկում չօգտագործված/ավելորդ քվեաթերթիկների համար նախատեսված հատվածը եղել է վնասված:
Լոռու մարզի մի շարք տեղամասերում խցիկների՝ օգտագործված քվեաթերթիկների դարակը եղել է վնասված՝ խաթարելով քվեարկության բնականոն ընթացքն ու գաղտնիության սկզբունքը:

Մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար

38/40, 33/27 և 33/46 տեղամասերում բացակայել են թեքահարթակները՝ ստեղծելով մատչելիության լուրջ խնդիր և փաստացի սահմանափակելով շարժական խնդիրներ ունեցող ընտրողների մասնակցությունը:

Քարոզչական նյութերի առկայությունը քվեարկության սենյակում

24/23 արձանագրվել է կուսակցությունների/դաշինքների քարոզչական նյութերի անօրինական առկայություն:
33/50 քվեարկության սենյակում առկա է եղել քարոզչանյութ գնահատված պաստառ. դիտորդի արձանագրումից հետո այն հեռացվել է:

Ոստիկանության ծառայողի ներկայությունը մինչև քվեարկության մեկնարկը

24/37 (Ալավերդի, Մեծ Այրում) ոստիկանության ծառայողը գտնվել է քվեարկության սենյակում մինչև ժամը 08:00-ն: ՀՀ ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ քվեատուփի և ընտրական փաստաթղթերի պահպանության ընդունումից հետո ոստիկանության ծառայողը պարտավոր է հեռանալ քվեարկության սենյակից, հետևաբար նրա ներկայությունը մինչև քվեարկության մեկնարկը հակասում է օրենքի պահանջներին:

Տեսանկարահանման միջոցների բացակայությունը

33/30 և Շիրակի մարզի ևս մի շարք տեղամասերում (ընդհանուր՝ մոտ 80 տեղամաս) բացակայել են տեսախցիկները:
Առաքելության համակարգող կենտրոնի ամփոփմամբ՝ հանրապետության մասշտաբով 30-ից ավելի (փաստացի՝ ցուցակով ներկայացված ավելի քան հարյուր) ընտրատեղամասերում բացակայել են անշարժ տեսախցիկները, ինչի հետևանքով չի ապահովվել ընտրական գործընթացի պատշաճ հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Առաքելության գնահատմամբ՝ իրավիճակը հակասում է ՀՀ ընտրական օրենսգրքի 11.1-րդ հոդվածով ամրագրված հրապարակայնության սկզբունքին: ԿԸՀ-ն խնդիրը մեկնաբանել է որպես ֆինանսական միջոցների խնայողության նպատակով ընդունված ներքին կազմակերպչական մոտեցում՝ նշելով, որ տեսախցիկները տեղադրվում են հիմնականում 300 և ավելի ընտրող ունեցող տեղամասերում: Միաժամանակ, առկա չէ որևէ հրապարակված նորմատիվ իրավական ակտ, այդ թվում՝ ԿԸՀ-ի որոշում, որով նախատեսված կամ հիմնավորված լիներ նշված տեղամասերում տեսանկարահանման միջոցներ չտեղադրելը:

2.2. Քվեարկության փուլ (08:00 – 20:00)

Չարձանագրված խախտումներ

Դիտարկված տեղամասերում չեն արձանագրվել այլ անձի փոխարեն կամ բազմակի քվեարկության, քվեատուփի լցոնման, ֆիզիկական բռնության կամ սպառնալիքի դեպքեր

Քվեարկության գաղտնիության խախտում և բաց քվեարկություն

23/15 (Վանաձոր) ընտրողն իր քվեարկությունը կատարել է բաց ձևով՝ չապահովելով քվեարկության գաղտնիությունը:
22/21 և 23/42 արձանագրվել է քվեարկության գաղտնիության իրավունքի խախտում:
Առաքելության ամփոփ տվյալներով՝ արձանագրվել է բաց քվեարկության 10 դեպք և գաղտնիության սկզբունքի խախտման 3 դեպք:

Կողմնակի անձանց ներկայությունը, կուտակումները և ընտրողների ուղղորդումը

Մի շարք տեղամասերում արձանագրվել են առանց նույնականացման վկայականների (բեյջերի) անձինք, առանց հրավերի տեղամասում շրջող ոստիկան, ինչպես նաև վստահված անձանց կողմից առաջացրած կուտակումներ և ընտրողների ենթադրյալ ուղղորդման դեպքեր:
38/20 «Ուժեղ Հայաստան» դաշինքից տեղամասում միաժամանակ ներկա են գտնվել երեք վստահված անձ. դիտորդի կողմից գրանցամատյանում կատարվել է համապատասխան գրառում:
24/22 արձանագրվել է կողմնակի անձանց անօրինական ներկայություն:
23/24 երկու ոստիկան օրենքի խախտմամբ մուտք են գործել տեղամաս և հետևել քվեարկության ընթացքին:
23/42 (Վանաձոր) արձանագրվել են կուտակումներ:
22/32 ներկա գտնվող վստահված անձանցից մեկը խախտել է անվտանգության կանոնները և ծխել քվեարկության սենյակում:

Դիտորդի գործունեության խոչընդոտումը և ճնշման դրսևորումները

22/32 (Գյուլագարակ) կուսակցություններից մեկի վստահված անձը ուղղորդել է ընտրողներին, իսկ դիտորդի կողմից խնդիրը բարձրաձայնելուց հետո փորձել է ճնշում գործադրել դիտորդի վրա՝ հայտարարելով, որ կհասնի նրա հեռացմանը տեղամասից: Հանձնաժողովի նախագահը բավարար միջոցներ չի ձեռնարկել իրավիճակը կարգավորելու համար, խնդիրը չի լուծվել նաև անդամների միջամտությունից հետո, և վստահված անձը սկսել է բարձրաձայն վիճաբանել ու բղավել նախագահի հասցեին: Դեպքի վերաբերյալ ահազանգ է փոխանցվել ԿԸՀ:

30/41 և 31/50 արձանագրվել են դիտորդների աշխատանքի կաշկանդվածության դեպքեր, որոնք պահանջել են համակարգողների լրացուցիչ միջամտություն:
Ամփոփ տվյալներով՝ արձանագրվել է դիտորդի գործունեության սահմանափակման 2 դեպք:

Հանձնաժողովների ընթացակարգային խախտումները

33/27 և 31/38 քվեաթերթիկների տրամադրման գործընթացին մասնակցել են հանձնաժողովի երկու անդամ, մինչդեռ այն պետք է իրականացներ ընդամենը մեկ անդամ:
33/27 և 33/46 սեղանի վրա քվեաթերթիկները բաշխված են եղել անհավասարաչափ, իսկ 33/46-ում պահարանից հանվել են սահմանված քանակից պակաս քվեաթերթիկներ:
31/50 (Գյումրի) տարբեր ընտրական ուժերի քվեաթերթիկների քանակը հավասար չի եղել. որոշ ուժերի քվեաթերթիկներ ներկայացված են եղել ավելի մեծ քանակով, ինչի հետևանքով չի ապահովվել քվեաթերթիկների հավասար ներկայացվածությունը:
Մի շարք տեղամասերում արձանագրվել է հանձնաժողովի անդամների ոչ բավարար պատրաստվածությունը:

Ընտրողների կողմից թույլ տրված խախտումները

33/27 (Սարատակ) ընտրողը ներկայացել է քաղաքական քարոզչական բովանդակություն պարունակող շապիկով. հանձնաժողովի ուշադրությունը հրավիրվել է հանգամանքի վրա և կազմվել է արձանագրություն: Նույն տեղամասում արձանագրվել է նաև կրկնակի գրանցման փորձ:
31/38 ընտրողը երկու անգամ մոտեցել է քվեատուփին, ինչպես նաև քվեարկելուց և տեղամասը լքելուց հետո կրկին վերադարձել է ներս:
Ամփոփ տվյալներով՝ տեղամասերում քարոզչական նյութեր պարունակող իրերի առկայության 3 դեպք:

Չօգտագործված քվեաթերթիկների դուրսբերումը տեղամասից

31/41 (Գյումրի) դիտորդն արձանագրել է, որ տեղամասից դուրս եկող անձինք իրենց հետ դուրս են հանել չօգտագործված քվեաթերթիկներ, որոնք հայտնաբերվել են դրսի աղբամանում. կազմվել է արձանագրություն:
Ամփոփ տվյալներով՝ արձանագրվել է չօգտագործված քվեաթերթիկների տեղամասից դուրս բերման 3 դեպք:

Ընտրական իրավունքի իրացման խոչընդոտումը

31/46 (Գյումրի) ընտրողին անձնագրային բաժանմունքի կողմից տրամադրվել էր անձը հաստատող փաստաթղթին փոխարինող ժամանակավոր տեղեկանք (Ձև 9), սակայն տեխնիկական սարքավորման պատասխանատուն հրաժարվել է մուտքագրել տվյալները՝ պատճառաբանելով, որ տեղեկանքի համարում առկա են հայերեն տառեր, իսկ սարքն ունի միայն լատինատառ ստեղնաշար: Ընտրողը փաստացի զրկվել էր ընտրական իրավունքն իրականացնելու հնարավորությունից: Առաքելության օպերատիվ միջամտությամբ (կապ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հետ, պարզաբանումների ստացում և ընթացակարգի ձևավորում) ընտրողն ուղղորդվել է անձնագրային բաժանմունք՝ տեխնիկական շտկման համար, ապա վերադարձել տեղամաս և լիարժեք իրականացրել իր սահմանադրական ընտրական իրավունքը:

31/45 ընտրողը կորցրել/սխալմամբ գցել էր նույնականացման սարքի կտրոնը (խցիկում առկա՝ չօգտագործված քվեաթերթիկների տուփի մեջ): Հանձնաժողովն արգելել է նրան մասնակցել քվեարկությանը և հեռացրել տեղամասից՝ առանց որևէ արձանագրության կազման: Մոտ երկու ժամ անց հանձնաժողովի նախագահը կտրոնը գտել է աղբամանում, զանգահարել քաղաքացուն և հրավիրել վերադառնալ քվեարկելու: Երկու դեպքից հետո էլ հանձնաժողովի նախագահն ու քարտուղարը հրաժարվել են մատյանում արձանագրել խախտումը. արձանագրությունը կազմվել է միայն առաքելության նախագահի՝ տեղամաս անձամբ ժամանելուց հետո: Արձանագրված խախտումներ՝ ընտրական իրավունքի իրացման խոչընդոտում, քվեարկության կտրոնի՝ որպես ընտրական փաստաթղթի, կառավարման կարգի խախտում, արձանագրությունից կազմակերպված խուսափում:

Զինծառայողների քվեարկությունը

35/65 և 10/51 տեղամասերում, որտեղ քվեարկել են զինծառայողներ, խախտվել է քվեարկության կարգը:
10/51 ժամը 19:58-ին, քվեարկության ավարտից ընդամենը երկու րոպե առաջ, տեղամաս են մուտք գործել մեծ թվով զինծառայողներ, ինչի հետևանքով քվեարկության սենյակում առաջացել է կուտակում, խաթարվել է հանձնաժողովի բնականոն աշխատանքը և զգալիորեն երկարաձգվել քվեարկության ընթացքը: Զանգվածային մուտքի հանգամանքը մտահոգություններ է առաջացրել գործընթացի կազմակերպված բնույթի վերաբերյալ:

Փակման պահին (ժամը 20:00) ընտրողների իրավունքի սահմանափակումը

24/22, 23/31 և 23/41 ժամը 20:00-ի դրությամբ տեղամասում գտնվող ընտրողների քվեարկությունն արգելվել է:
33/27 20:00-ի դրությամբ արգելվել է քաղաքացու քվեարկության շարունակությունը:
24/22 տեղամասը չի փակվել սահմանված ճիշտ ժամին. մինչդեռ Տավուշի մարզի դիտարկված բոլոր տեղամասերը փակվել են ժամանակին:

Տեսանկարահանման խափանումները

38/20 տեսախցիկը տևական ժամանակ չի ապահովել ուղիղ հեռարձակումը. մի շարք այլ տեղամասերում տեսախցիկների բացակայությունը կամ ոչ լիարժեք աշխատանքը սահմանափակել է վերահսկողության հնարավորությունները:

Ահազանգերի ամփոփ վիճակագրություն (12:00–16:00)

Նշված ժամանակահատվածում արձանագրված խախտումների հիման վրա առաքելության կողմից պատրաստվել է երեք դիմում՝ ուղղված Ոստիկանությանը, և ավելի քան քսան ահազանգ՝ ուղղված Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Խախտման տեսակը	Դեպքերի քանակը
Դիտորդի գործունեության սահմանափակում	2
Բաց քվեարկություն	10
Քարոզչական նյութեր պարունակող իրերի առկայություն տեղամասում	3
Չօգտագործված քվեաթերթիկների դուրսբերում տեղամասից	3
Կուտակումներ տեղամասում	2
Քվեարկության գաղտնիության սկզբունքի խախտում	3

2.3. Տեղամասերի փակման և ձայների հաշվարկի փուլ (20:00-ից սկսած)

Չարձանագրված խախտումներ

Դիտորդները չեն արձանագրել միտումնավոր սխալ հաշվարկի, արդյունքների կեղծման կամ ամփոփման փուլում ֆիզիկական բռնության դեպքեր. տեղամասերի մեծ մասում զրոյական արձանագրությունների և քաղվածքների ստացումն ու հրապարակումն ապահովվել է սահմանված կարգով:

Ծրարներում կողմնակի առարկաների և ուղղորդման նշանների հայտնաբերումը

38/26 ծրարների մեջ հայտնաբերվել են քվեաթերթիկներից բացի այլ պարագաներ կամ ուղղորդման նշաններ:
24/22 ձայների հաշվարկի ժամանակ ծրարներում հայտնաբերվել են քվեաթերթիկներից բացի այլ պարագաներ (մեկից տասը դեպք):
30/41 և 32/04 մի քանի ծրարներում հայտնաբերվել են քվեաթերթիկից բացի այլ պարագաներ:

Մեկ ծրարում մեկից ավելի քվեաթերթիկ

38/23 երկու քվեաթերթիկ միանգամից տեղադրվել են նույն ծրարում, ինչի հետևանքով արձանագրվել է տասնմեկ անվավեր քվե:
Լոռու մարզում դիտորդ Սոնա Հովհաննիսյանն արձանագրել է դեպք, երբ ծրարում եղել է երկու քվեաթերթիկ, ինչի պատճառով այն համարվել է անվավեր:

Քվեաթերթիկների հետ մանիպուլյացիան հաշվարկի ընթացքում

31/45 ընտրական հանձնաժողովի անդամները մարված ծրարից հանել են թիվ 16 քվեաթերթիկը և փորձել տեղադրել այն վավեր քվեաթերթիկների փաթեթում՝ թիվ 15 քվեաթերթիկը թողնելով անվավեր: Դիտորդների պահանջներից և առարկություններից հետո անդամները շարունակել են պնդել իրենց դիրքորոշումը և հրաժարվել քվեաթերթիկներն անվավեր ճանաչելուց: Միայն այն բանից հետո, երբ առաքելության իրավաբանը հեռախոսազանգի ընթացքում նշել է, որ նրանց գործողություններում առկա են հանցագործության ակնհայտ հատկանիշներ, հանձնաժողովի նախագահը որոշում է կայացրել երկու քվեաթերթիկն էլ ճանաչել անվավեր:
Նույն տեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձը դիտորդների նկատմամբ ցուցաբերել է ագրեսիվ և անհարգալից վերաբերմունք՝ խոչընդոտելով բնականոն աշխատանքային մթնոլորտը:

Հաշվառման տվյալների անհամապատասխանությունը

Հաշվարկի ընթացքում մի շարք տեղամասերում (Տավուշ, Լոռի) ծագել են տարաձայնություններ հանձնաժողովի անդամների և նախագահների միջև՝ պայմանավորված կտրոնների, կնիքների, ընտրողների ցուցակում կատարված գրանցումների և դրոշմանիշների քանակական անհամապատասխանությամբ:
Իջևան համայնքի տեղամասերից մեկում արձանագրվել է նույնականացման սարքի տվյալների անհամապատասխանություն, որի վերաբերյալ պարզաբանումներ են ստացվել ոստիկանությունում:

Դիտորդների արձանագրումների գրանցումից հրաժարումը և ամփոփիչ նիստի ուշացումը

31/45 ամփոփիչ նիստը սկսվել է 1,5 ժամ ուշացումով. հանձնաժողովը չէր համաձայնվում գրանցամատյանում կատարել դիտորդի արձանագրումը, և նիստը սկսվել է միայն ԿԸՀ-ի միջամտությունից հետո:

Հաշվարկի վերահսկման հնարավորության սահմանափակումը

22/32 (Գյուլագարակ) կահավորումը թերի էր, ինչի պատճառով դիտորդների համար հնարավոր չի եղել վերահսկել ձայների հաշվարկի գործընթացը. հարցը կարգավորվել է միայն ԿԸՀ-ի միջամտությունից հետո:

Վստահված անձանց միջամտությունը հաշվարկի փուլին

Տավուշի և Լոռու մարզերի մի շարք տեղամասերում վստահված անձինք միջամտել են ձայների հաշվարկին, վիճաբանություններ հրահրել մարված քվեաթերթիկների վերաբերյալ և փորձել ազդել հանձնաժողովների որոշումների վրա՝ խաթարելով ամփոփման բնականոն ընթացքը:

Վերահաշվարկի գործընթացները

Առաքելության դիտորդները ներկա են գտնվել 23 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ընթացող վերահաշվարկի գործընթացներին. Թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ձայների վերահաշվարկը վերսկսվել է:

3. Ամփոփում

Երեք մարզերում իրականացված կարճաժամկետ դիտարկումը ցույց է տալիս, որ դիտարկված տեղամասերում չեն արձանագրվել քվեատուփի լցոնման, բազմակի քվեարկության, ֆիզիկական բռնության կամ արդյունքների միտումնավոր կեղծման դեպքեր: Այնուամենայնիվ, արձանագրված խախտումները վկայում են համակարգային բնույթի մի քանի խնդիրների մասին.

- Հրապարակայնության և վերահսկելիության պակաս՝ պայմանավորված զգալի թվով տեղամասերում տեսանկարահանման միջոցների բացակայությամբ և առանց հրապարակված նորմատիվ հիմքի կիրառվող ընտրողական մոտեցմամբ:
- Ընտրողի ընտրական իրավունքի կամայական սահմանափակումներ՝ և՛ քվեարկության ընթացքում (կտրոնի կորուստ, Ձև 9 տեղեկանքի տեխնիկական խոչընդոտ), և՛ փակման պահին (20:00-ի դրությամբ տեղամասում գտնվող ընտրողների չթույլատրում):
- Դիտորդների գործունեության խոչընդոտում՝ ճնշման դրսևորումներ, ագրեսիվ վարքագիծ և գրանցամատյանում արձանագրումների կատարումից հրաժարում, ինչը մի շարք դեպքերում պահանջել է առաքելության ղեկավարության, իրավաբանի կամ ԿԸՀ-ի ուղղակի միջամտություն:
- Հանձնաժողովների անդամների ոչ բավարար պատրաստվածություն՝ հատկապես ամփոփման փուլում (կտրոնների, կնիքների, դրոշմանիշների հաշվառում, քվեաթերթիկների վավերականության որոշում):
- Վստահված անձանց ոչ իրավաչափ միջամտություն՝ ընտրողների ուղղորդում, կուտակումների առաջացում, հաշվարկին միջամտություն և հանձնաժողովների որոշումների վրա ազդելու փորձեր:
- Մատչելիության խնդիրներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար թեքահարթակների բացակայություն մի շարք տեղամասերում:

4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արձանագրված խախտումների հիման վրա «Ազատ Քվե» դիտորդական առաքելությունը ներկայացնում է հետևյալ առաջարկությունները.

4.1. Օրենսդրական և նորմատիվ փոփոխություններ

1. Տեսանկարահանման միջոցներ. ԿԸՀ-ի կողմից ընդունել և հրապարակել նորմատիվ իրավական ակտ, որով հստակ կսահմանվեն ընտրատեղամասերում տեսախցիկների տեղադրման չափորոշիչները: Միջնաժամկետ հեռանկարում ապահովել բոլոր ընտրատեղամասերի տեսանկարահանումը՝ անկախ ընտրողների թվից, քանի որ 300-ից պակաս ընտրող ունեցող տեղամասերի բացառումը զրկում է ընտրողների զգալի հատվածին հրապարակայնության երաշխիքից և հակասում է ընտրական օրենսգրքի 11.1-րդ հոդվածի ոգուն:
2. Հավատարմագրման չափորոշիչներ. հստակեցնել դիտորդական կազմակերպությունների հավատարմագրման չափորոշիչներն ու մերժման սպառիչ հիմքերը՝ բացառելով կանոնադրական նպատակների կամայական և սահմանափակող մեկնաբանությունը, և սահմանել մերժման բողոքարկման պարզեցված ընթացակարգ:
3. Ընտրական փաստաթղթերի կառավարում. օրենսդրորեն ամրագրել հստակ ընթացակարգ նույնականացման սարքի կտրոնի կորստի, վնասման կամ սխալմամբ տեղադրման դեպքերի համար՝ բացառելով ընտրողի կամայական հեռացումը տեղամասից և քվեարկությունից զրկելը:
4. Փակման պահի կարգավորում. օրենքով միանշանակորեն ամրագրել, որ ժամը 20:00-ի դրությամբ տեղամասում գտնվող բոլոր ընտրողները պահպանում են քվեարկելու իրավունքը, և սահմանել պատասխանատվություն այդ իրավունքը խոչընդոտելու համար:
5. Զինծառայողների քվեարկության կարգ. կանոնակարգել զինծառայողների կազմակերպված ժամանումը ընտրատեղամաս՝ բացառելով քվեարկության ավարտին անմիջապես նախորդող զանգվածային մուտքը, և ապահովել նրանց քվեարկության ազատ ու գաղտնի բնույթը:
6. Վստահված անձանց ինստիտուտ. սահմանափակել մեկ ընտրատեղամասում միևնույն քաղաքական ուժի վստահված անձանց միաժամանակյա ներկայության թիվը, ամրագրել վարքագծի կանոններ և տեղամասից հեռացնելու հստակ ընթացակարգ՝ ընտրողներին ուղղորդելու, դիտորդների վրա ճնշում գործադրելու կամ կարգը խախտելու դեպքերում:

4.2. Ընթացակարգային և կազմակերպչական բարելավումներ

1. Կահավորման պարտադիր ստուգաթերթ. ներդնել նախապատրաստական նիստի ընթացքում լրացվող ստուգաթերթ, որը կներառի քվեախցիկների տեղադրումը պատուհաններից և կողմնակի հայացքից հեռու, պատնեշների պատշաճ կիրառումը
2. Մատչելիություն՝ ապահովել թեքահարթակների պարտադիր առկայությունը բոլոր ընտրատեղամասերում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տեղամասը տեղափոխել մատչելի շենք:
3. Քվեաթերթիկների հավասար ներկայացվածություն՝ ապահովել բոլոր ընտրական ուժերի քվեաթերթիկների հավասար քանակն ու հավասարաչափ բաշխումը սեղանին, ինչպես նաև պահարանից հանվող քվեաթերթիկների ճշգրիտ հաշվառումը:
4. Հանձնաժողովների անդամների պարտադիր վերապատրաստում և գիտելիքների ստուգում՝ շեշտադրելով քվեաթերթիկների տրամադրման կանոնը (մեկ անդամ), ամփոփման փուլի ընթացակարգերը և քվեաթերթիկների վավերականության որոշման հիմքերը:
5. Ընտրողների իրազեկում. նախաընտրական շրջանում իրականացնել իրազեկման արշավ՝ ծրարում միայն մեկ քվեաթերթիկ տեղադրելու, կողմնակի առարկաներ չդնելու, քարոզչական բովանդակությամբ հագուստով չներկայանալու և քվեարկության գաղտնիությունը պահպանելու վերաբերյալ:
6. Տեխնիկական սարքավորումներ՝ ապահովել, որ ընտրողների գրանցման սարքերը հնարավորություն տան մուտքագրելու հայատառ տվյալներ, այդ թվում՝ Ձև 9 ժամանակավոր տեղեկանքների համարները, և սահմանել այլընտրանքային ընթացակարգ տեխնիկական խոչընդոտի դեպքում:

4.3. Դիտորդների իրավունքների պաշտպանություն

1. Գրանցամատյանում դիտորդի արձանագրումը կատարելուց հրաժարվելը դիտարկել որպես առանձին խախտում՝ հանձնաժողովի նախագահի և քարտուղարի նկատմամբ կիրառելի պատասխանատվության միջոցներով:
2. Ապահովել ձայների հաշվարկի գործընթացի տեսանելիությունը դիտորդների համար՝ ամփոփիչ նիստի կահավորման պարտադիր պահանջներ սահմանելով:
3. Ոստիկանության ծառայողների ներկայությունը քվեարկության սենյակում խստորեն կանոնակարգել՝ ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ, և սահմանել պատասխանատվություն այն խախտելու համար:

4.4. Հաշվետվողականություն և արձագանք

1. Սահմանել ԿԸՀ-ին ուղղված ահազանգերին արձագանքման հստակ ժամկետներ և պարտադիր հետադարձ կապի ընթացակարգ, ինչպես նաև հրապարակել ստացված ահազանգերի ու դրանց ընթացքի վերաբերյալ ամփոփ վիճակագրություն:
2. Ապահովել ընտրախախտումների, հատկապես՝ ձայների հաշվարկի ընթացքում քվեաթերթիկների հետ մանիպուլյացիայի դեպքերի (31/45) արդյունավետ և ժամկետային քննությունը՝ պատասխանատվության իրական միջոցների կիրառմամբ:

«ԱԶԱՏ ՔՎԵ»
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

+37455303942
azatqve2026@gmail.com

Հուլիսի 29, 2026 թ.